ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ
ԱԲՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՀՀ Կոտայքի մարզ, ք. Աբովյան, Բարեկամության հր.-1, 2201, հեռ. (0222) 2-03-65, (060) 447-000, էլ. հասցե abovyan.kotayq@mta.gov.am

30 հունիսի 2023թ.N Ե-3969

«ԱԳԼԱ» ՍՊԸ
ՏՆՕՐԵՆ
ՀԱՐՈՒԹՅՈՒՆ ՄԿՐՏՉՅԱՆԻՆ

Ծանուցում

Հարգելի Հ. Մկրտչյան

Աբովյանի համայնքապետարանի (այսուհետ՝ Պատվիրատու) և «ԱԳԼԱ» ՍՊԸ-ի (այսուհետ՝ Կատարող) միջև 16.03.2023 թվականին կնքվել է «ԱԲՀ-ԳՀԾՁԲ-23/17-1» ծածկագրով ծառայության մատուցման պայմանագիր, որի 1.1 կետի համաձայն՝ Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է տրանսպորտային փոխադրման ծառայությունների մատուցման պարտավորությունը (այսուհետ՝ ծառայություն)՝ համաձայն սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:
Կատարողը «ԱԲՀ-ԳՀԾՁԲ-23/17-1» ծածկագրով պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով չի մատուցել ծառայությունները՝ մասնավորապես չի արձագանքել բանավոր և գրավոր պատվերի ծանուցումներին:
Պայմանագրի 2.1.3 կետի համաձայն՝ Պատվիրատուն իրավունք ունի միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝
ա) մատուցված ծառայությունը չի համապատասխանում պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,
բ) խախտվել է ծառայության մատուցման ժամկետը:
Հիմք ընդունելով վերոգրյալը և ղեկավարվելով ՀՀ Կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» կարգի 33-րդ կետի 17-րդ ենթակետով սահմանված դրույթներով՝ Պայմանագիրը միակողմանի լուծվել է Պատվիրատուի կողմից:
Հայտնում ենք, որ Ընկերության տվյալները «Գնումների մասին» օրենքի 6-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն, գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով, օրենքով սահմանված կարգով կներկայացվեն լիազոր պետական մարմին:
Միաժամանակ տեղեկացնում ենք, որ Ընկերության կողմից, որպես պայմանագրային պարտավորությունների պատշաճ կատարման ապահովում ներկայացված որակավորման և պայմանագրի ապահովումները սահմանված կարգով կներկայացվեն Ընկերությանը սպասարկող բանկ՝ սահմանված գումարները Աբովյանի համայնքապետարանի համապատասխան հաշվեհամարին փոխանցելու նպատակով:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Է. ԲԱԲԱՅԱՆ

Կատ. Զարգացման ծրագրերի և գնումների բաժնի պետ
Ա. Ծատուրյան
+37460536402